ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 2024

12

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա

Բովանդակություն

Ողջույնի խոսք

«Երևանի հասարակական տրանսպորտի ճգնաժամն ու վարորդների գործադուլը» թեմայով քննարկում

«Վարորդների բունտ՝ ընդդեմ քաղաքապետարանի. խախտվե՞լ են հեռացվածների իրավունքները» թեմայով բանավեճ

«Բռնության և ոտնձգությունների մասին ԱՄԿ թիվ 190 կոնվենցիա. Կանխենք բռությունն ու ոտնձգությունը աշխատավայրում» գրքույկ

ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանը մասնակցել է «Ձեր փաստաբանը» հաղորդմանը

Երկօրյա աշխատաժողով «Արհմիությունների կարողությունների զարգացումը բռնի տեղահանված անձանց կարիքների արձագանքման, ոչ ֆորմալ տնտեսությունում աշխատողների կազմակերպման և արհմիություններում ինտեգրման համատեքստում» թեմայով

«Արհմիություններ և արդար անցում. ապագայի ստեղծում աշխատողների համար» թեմայով միջազգային կոնֆերանս Թբիլիսում

«Ճգնաժամային իրավիճակների կառավարում։ Երիտասարդների դերի կարևորությունը ՀՀ քաղհասարակությունում» թեմայով սեմինար

Աշխատանքային ժամերի կրճատման վերաբերյալ հայտարարություն

Առավել վտանգված է շինոլորտում աշխատողների առողջությունը. ժամը լրատվական

Կայացավ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի տարեվերջյան խորհրդի նիստը

«Ես եմ քո Ձմեռ Պապը» արշավ

Բարի գալուստ,
«Արիմիութենական անցուդարձ» ամսագիր

«Արիմիութենական անցուդարձ» ամսագիրը հանդիսանում է Հայաստանում արիմիութենական առաջին էլեկտրոնային ամսագիրը, որի նպատակն է տարածել և հանրահռչակել Հայաստանի արիմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) կողմից յուրաքանչյուր ամսվա ընթացքում կատարած աշխատանքների մասին տեղեկատվությունը: Արիմիութենական առօրյան հարուստ է բազմազան միջոցառումներով, ծրագրերով, որոնք ուղղված են աշխատողների իրազեկմանը, աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական, տնտեսական, մասնագիտական իրավունքների ներկայացմանը, պաշտպանմանը և առաջ մղմանը:

Մենք վստահ ենք՝ այսօր ժամանակակից աշխարհում ամենազորեղ զենքը գիտելիքն է և տեղեկտավության տարածումը:

Հայաստանի արիմիությունների
կոնֆեդերացիայի աշխատակազմ

«Երևանի հասարակական տրանսպորտի ճգնաժամն ու վարորդների գործադուլը» թեմայով քննարկում

Մեդիա կենտրոնում 2024 թվականի դեկտեմբերի 4-ին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ էլեն Մանասերյանը մասնակցել է «Երևանի հասարակական տրանսպորտի ճգնաժամն ու վարորդների գործադուլը» թեմայով քննարկմանը:
Քննարկմանը մասնակցել են նաև Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանը, «Իրազեկ և պաշտպանված սպառող» ՀԿ հիմնադիր նախագահ Բաբկեն Պիպոյանը:

Քննարկումը կարող եք դիտել հետևյալ հղմամբ՝ https://shorturl.at/qra9I :

«Վարորդների բունտ՝ ընդդեմ քաղաքապետարանի. խախտվե՞լ են հեռացվածների իրավունքները» թեմայով բանավեճ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը մասնակցել է «Վարորդների բունտ՝ ընդդեմ քաղաքապետարանի. խախտվե՞լ են հեռացվածների իրավունքները» թեմայով բանավեճին։

Բանավեճը կարող եք դիտել հետևյալ հղմամբ՝ https://shorturl.at/sh6yC:

«Բռնության և ոտնձգությունների մասին ԱՄԿ թիվ 190 կոնվենցիա. Կանխենք բռությունն ու ոտնձգությունը աշխատավայրում» գրքույկ

Հայաստանի արիմիությունների կոնֆեդերացիան մշակել և հրապարակել է «Բռնության և ոտնձգությունների մասին ԱՄԿ թիվ 190 կոնվենցիա. Կանխենք բռությունն ու ոտնձգությունը աշխատավայրում» վերնագրով գրքույկը: Այն նպատակ ունի լուսաբանել ԱՄԿ թիվ 190 կոնվենցիայի դրույթները և աջակցել աշխատավայրում բռնության և ոտնձգությունների կանխարգելմանը:

Գրքույկը կարող եք ներբեռնել հետևյալ հղումով՝ https://hamk.am/uploads/files/C190.pdf

ՀԱՄԿ-ի նախագահ էլեն Մանասերյանը մասնակցել է «Ձեր փաստաբանը» հաղորդմանը

Աշխարհի բնակչության 60%-ը ներգրավված է աշխատաշուկայում: Միջազգային կազմակերպությունները, այդ թվում՝ ԱՀԿ և ԱՄԿ, բարձրացնում են աշխատավայրում հոգեկան առողջության պահպանման կարևորությունը:

Աշխատավայրում հոգեկան առողջության ռիսկեր ներառում են՝ բարձր աշխատանքային ծանրաբեռնվածություն, խանգարված աշխատանքային միջավայր, բուլինգ, աշխատանքային ծանրաբեռնվածության կամ պլանավորման նկատմամբ վերահսկողության բացակայություն, վատ աշխատանքային պայմաններ, բռնություն, խտրականություն, անբավարար վարձատրություն և այլ գործոններ:

Ի՞նչպես կարելի է բարելավել ու փոփոխել աշխատանքային միջավայրը: Որո՞նք են այն գործնական քայլերը, որոնք պետք է կատարեն աշխատողները և գործատուները՝ աշխատավայրում հոգեկան առողջության ապահովման համար:

Այս ամենի մասին առավել մանրամասն դիտեք տեսանյութում՝ https://shorturl.at/UC1Ne

Երկօրյա աշխատաժողով «Արհմիությունների կարողությունների զարգացումը բռնի տեղահանված անձանց կարիքների արձագանքման, ոչ ֆորմալ տնտեսությունում աշխատողների կազմակերպման և արհմիություններում ինտեգրման համատեքստում» թեմայով

2024 թվականի դեկտեմբերի 12-ից դեկտեմբերի 13-ը Երևանում տեղի ունեցավ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից կազմակերպված երկօրյա աշխատաժողով «Արհմիությունների կարողությունների զարգացումը բռնի տեղահանված անձանց կարիքների արձագանքման, ոչ ֆորմալ տնտեսությունում աշխատողների կազմակերպման և արհմիություններում ինտեգրման համատեքստում» թեմայով: Միջոցառման ընթացքում ելույթներով հանդես եկան ԱՄԿ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հարցերով բաժնի ղեկավար Սերգեյուս Գլովացկասը, ԱՄԿ տարածաշրջանային գրասենյակի աշխատողների հարցերով մասնագետ Գոչա Ալեքսանդրիան, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանը:

Հանդիպմանը մասնակցում էին ՀԱՄԿ-ի անդամ ՃՀՄ նախագահներ, տարածքային, մարզային արհմիութենական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց «Վերածնունդ» արհմիութենական կազմակերպության ներկայացուցիչներ: ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը և իրավաբան Աննա Բարիկյանը ներկայացրեցին ՀԱՄԿ-ի կողմից իրականացված ուսումնասիրությունը «Բռնի տեղահանված անձանց կարիքների գնահատում և խնդիրների վեր հանում կապված աշխատաշուկա ինտեգրվելու հետ» թեմայով: Ճյուղային միությունների նախագահների և մարզերի ներկայացուցիչների կողմից ներկայացվեցին վերջին 2 տարում ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց տրամադրված աջակցության և կատարված աշխատանքների վերաբերյալ: ԱՄԿ գործընկերները ներկայացրեցին բռնի տեղահանվածների և փախստականների հետ աշխատանքների վերաբերյալ արհմիությունների միջազգային փորձը:

Աշխատաժողովի երկրորդ օրը մասնակիցները քննարկեցին ոչ ֆորմալ տնտեսությունում աշխատողների կազմակերպման և արհմիություններում ներգրավվման վերաբերյալ արհմիությունների միջազգային փորձը, քննարկեցին և ուրվագծեցին հայաստանյան արհմիությունների գործողությունները:

ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանը, ամփոփելով աշխատաժողովը, շնորհակալություն հայտնեց ԱՄԿ գործընկերներին շարունակական աջակցության և ՃՀՄ ներկակացուցիչներին՝ հետևողական աշխատանքի համար:

Միջոցառման վերաբերյալ տեսանյութըկարող եք դիտել հետևյալ հղումով
https://shorturl.at/SCFVG

«Արհմիություններ և արդար անցում. ապագայի ստեղծում աշխատողների համար» թեմայով միջազգային կոնֆերանս Թբիլիսում

2024 թվականի դեկտեմբերի 17-ից դեկտեմբերի 18-ը Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի ուսումնահետազոտական կենտրոնի ղեկավար Վարդուհի Բրուտյանը մասնակցել է Թբիլիսիում կայացած Վրաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի կողմից հյուրընկալված «Արհմիություններ և արդար անցում. ապագայի ստեղծում աշխատողների համար» թեմայով միջազգային կոնֆերանսին, որն կազմակերպվել է Աշխատանքի միջազգային կազմակերպության Աշխատանքային գործունեության բյուրոյի (ILO-ACTRAV) կողմից։

Կոնֆերանսի ընթացքում քննարկվել են արհմիութենական կազմակերպությունների առկա մարտահրավերները արդար անցման գործընթացում և նրանց գործառնական ծրագրերը։ Տարբեր երկրների արհմիությունների ներկայացուցիչները մշակել են ապագա ռազմավարություններ՝ աշխատողների իրավունքների պաշտպանությունն ապահովելու նպատակով։

«Ճգնաժամային իրավիճակների կառավարում: Երիտասարդների դերի կարևորությունը ՀՀ քաղհասարակությունում» թեմայով սեմինար

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և «Սոլիդարիթի Սենթր» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության հետ համագործակցության շրջանակներում 2024 թվականի դեկտեմբերի 21-ից դեկտեմբերի 22-ը կազմակերպվել է «Ճգնաժամային իրավիճակների կառավարում: Երիտասարդների դերի կարևորությունը ՀՀ քաղհասարակությունում» թեմայով սեմինար արհմիութենական երիտասարդ առաջնորդների և ակտիվիստների համար:

Աշխատանքային ժամերի կրճատման վերաբերյալ հայտարարություն



‹‹Աշխատել պետք է ոչ թե 12 ժամ, այլ գլխով››
Սթիվ Ջոբս

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան ողջունում և սատարում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերը, քանի որ՝

- Աշխատանքային ժամերի կրճատումը կնպաստի աշխատանքի որակի բարձրացմանը, աշխատողների հոգեկան և ֆիզիկական առողջության պահպանմանը և կյանքի որակի բարելավմանը: Երբ աշխատողներն ունենան բավարար հանգստի ժամանակ, նրանք կարող են վերականգնել իրենց ուժերը և ավելի արդյունավետ աշխատել իրենց աշխատանքի ժամերին:
- Սա գործուն քայլ է դեպի սոցիալական բաղադրիչը, ինչը սահմանադրական պարտավորություն է, քանի որ Հայասատանի Հանրապետությունը սոցիալական պետություն է:
- Գործատուները պարտավոր են ապահովել արժանապատիվ աշխատանքային միջավայր և կազմակերպել աշխատանքի այնպիսի բաշխում, որի արդյունքում աշխատողը կարող է արդյունավետ իրականացնել իր գործառույթն ավելի նվազ աշխատանքային ժամերի ընթացքում:
- Ցածր և գնաճի հետ անհամաչափ աշխատավարձերի պայմաններում, ամենաշատ արձանագրվող խախտումներից են աշխատողների գերծանրաբեռնվածությունը, փոխարինող աշխատողներ չներառելը, անգամ աշխատողի՝ ամենամյա կամ չվճարվող արձակուրդում գտնվելու ժամանակ փոխարինող աշխատողը շատ դեպքերում ստիպված է լինում կատարել կրկնակի աշխատանք և չփոխհատուցվել:

- Ինչ վերաբերում է տոնական և ոչ աշխատանքային օրերի կրճատմանը՝ սա նույնպես աշխատողին ի վնաս և գործատուներին կրկնակի շահույթ ստանալուն է հանգեցրել, քանի որ այն ոլորտներում որտեղ աշխատում են անընդմեջ, տոնական և ոչ աշխատանքային օրերին, գործատուներն ավելի պակաս են վարձատրել:

Հետևաբար, այս քաղաքականությունը չի հանգեցրել Հայաստանում ապրող և աշխատող քաղաքացու բարեկեցության բարձրացմանը, հակառակը անհավանական գնաճի պայմաններում աշխատավարձերը չեն ինդեքսավորվում և ՀՀ-ում շարունակում է բարձր մնալ աշխատող աղքատների թվաքանակը:

Բացի այդ երկարատև աշխատանքային ժամերը և աշխատանքային ծանրաբեռնվածությունը հանգեցնում են հոգեբանական և ֆիզիկական հոգնածության և լարվածության, որի արդյունքում ավելանում են աշխատավայրերում դժբախտ դեպքերը, այդ թվում՝ մահվան ելքով, և մասնագիտական հիվանդությունները. մինչդեռ ՀՀ Սահմանադրության 82-րդ հոդվածի համաձայն «Յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք»:

Ժամանակակից տեխնոլոգիաները թույլ են տալիս նույն աշխատանքն իրականացնել արագ և արդյունավետ: Սա նշանակում է, որ աշխատելու համար անհրաժեշտ է ավելի քիչ ժամանակ:

Ինչ վերաբերում է ՀՆԱ -ի աճին՝ այն ավելի շատ պայմանավորված է ինտենսիվ միգրացիոն հոսքերով և արդյունավետ քաղաքականությամբ այդ ոլորտում և այլ գործընթացներով, քան տոնական, ոչ աշխատանքային օրերի քանակի կրճատմամբ:

Արհմիությունները սատարում են այս նախագիծը, քանի որ պետության սոցիալական քաղաքականությունը պետք է ուղղված լինի կենսամակարդակի բարձրացմանը, և առաջին հերթին պետք է հաշվի առնվի ՀՀ-ում ապրող և աշխատող քաղաքացու բարեկեցությունը, այլ ոչ միայն բիզնեսի շահը:

Ցանկացած բիզնես և տնտեսություն չի կարող զարգանալ առանց աշխատող մարդու, և ի վերջո, պետք է ընդունել, որ աշխատողը գործիք չէ և արժանի է արժանապատիվ աշխատանքային պայմանների և կյանքի:

Միայն արժանապատիվ աշխատանքով ապրող և աշխատող քաղաքացիներն են կարող ապահովել պետության անվտանգությունը և կայունությունը, միայն այդ դեպքում է հնարավոր սոցիալական արդարություն: Այս մոտեցումն այլընտրանք չունի:

Հայտարարությունը տեղադրվել է հետևյալ լրատվական կայքերում.

1. Aysor.am լրատվական կայք (https://shorturl.at/OxbMg)
2. NEWS.am լրատվական կայք (https://news.am/arm/news/859281.html)
3. Panorama.am լրատվական կայք (https://shorturl.at/pKNgl)
4. aravot.am լրատվական կայք (https://shorturl.at/5PtsC)
5. ATNEWS.am լրատվական կայք (https://shorturl.at/Txxml)
6. Livenews.am լրատվական կայք (https://shorturl.at/mQgNM)
7. MITK.am լրատվական կայք (https://shorturl.at/hBG09)
8. Նոյյան Տապան լրատվական կայք (https://nt.am/am/news/335548/)
9. Լուրեր.com լրատվական կայք (https://lurer.com/article/611525/am)
10. ՕՐԱԳԻՐ.News լրատվական կայք (https://shorturl.at/gSq0x)

Առավել վտանգված է շինոլորտում աշխատողների առողջությունը. Ժամը լրատվական

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը խոսել է աշխատողների առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների վերաբերյալ։

Հաղորդումը կարող եք դիտել հետևյալ հղմամբ՝ https://shorturl.at/jHJci

Կայացավ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի տարեվերջյան խորհրդի նիստը

2024թ դեկտեմբերի 26-ին տեղի ունեցավ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի խորհրդի նիստ, որին մասնակցում էին խորհրդի 55 անդամներից 47-ը: Խորհրդի անդամները ներկայացնում են ՀԱՄԿ-ին անդամակցող 18 ճյուղային հանրապետական միությունները:

Խորհրդի նիստի ժամանակ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը ներկայացրեց 2024թ գործադիր կոմիտեի և ՀԱՄԿ-ի գործունեության վերաբերյալ հաշվետվությունը (հաշվետվությունը ստորև), երկրորդ հարցով հաստատվեց ՀԱՄԿ -ի 2025 թ. նախահաշիվը:

Կրթության և գիտության աշխատողների Ճյուղային հանրապետական միության նախագահ Գ.Ղարիբյանը շնորհակալություն հայտնեց կատարած աշխատանքի համար: Ներկայացրեց Կրթության ՃՀՄ-ում գործընթացը քոլեջների և բուհերին կից աշխատակիցների համար սոցիալական փաթեթի վերաբերյալ, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվող աշխատանքները թեմայի վերաբերյալ:

Ագրոարդյունաբերական համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Հ. Ջհանգիրյանը շնորհակալություն հայտնեց կատարած աշխատանքի համար: Կարևորեց այն փաստը, որ արհմիությունները վերջին տարում ավելի լսելի և տեսանելի են դարձել: Շնորհակալություն հայտնեց նաև գործընկերներին:

Հաշվետվությանը կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով https://hamk.am/uploads/files/Report-2024-CTUA.pdf

«Ես եմ քո Ձմեռ Պապը» արշավ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան այս տարի ևս նախաձեռնեց «Ես եմ քո Ձմեռ Պապը» արշավը՝ Տավուշի մարզի Արծվաբերդ և Չինարի գյուղերի երեխաների համար: Արհմիությունների ակտիվ անդամներն, ստանալով երեխաների նամակները, սիրով պատրաստեցին նրանց համար նվերներ: Արշավի արդյունքում արհմիութենական Ձմեռ Պապը ուրախություն բերեց 148 փոքրիկի՝ փոխանցելով նրանց սպասված նվերները:

«Ես եմ քո Ձմեռ Պապը» արշավի վերաբերյալ տեսահոլովակը կարող եք դիտել հետևյալ հղումով https://shorturl.at/FsKYY

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա
Հասցե՝ Վազգեն Սարգսյան 26/3
Հեռ.՝ +37410 583682
www.hamk.am
hamk@hamk.am